

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/2

29 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանի 22.02.2016թ-ի գանգատը «ՖՆ Գավառի ՏՀՏ 12.01.2016թ-ի թիվ 6109459 ակտի դեմ:

Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանը հայտնում է, որ համաձայն չէ «ՖՆ Գավառի ՏՀՏ 12.01.2016թ-ի թիվ 6109459 ստուգման ակտի հետ հետևյալ պատճառաբանությամբ.

2015թ-ի դեկտեմբերի 18-ին Գավառի ՏՀՏ աշխատակիցներն իր առևտրային կետում կատարած հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգման ժամանակ հայտնաբերել են խախտում, որը հիմնավոր չէ, քանի որ չնայած այն բանին, որ խախտման արձանագրությունում նշված է, թե դրանք իբրև առանց դրոշմապիտակների են, իրականում բոլորն էլ եղել են դրոշմապիտակավորված: Պարզապես, ապրանքների վերադասավորման արդյունքում դրանց առանձնահատկություններից ելնելով վերջիններիս մի մասը պոկված և ընկած են եղել դարակներում, իսկ դրանց առկայության վրա տեսուչները ուշադրություն չեն դարձրել: Համանման ապրանքների մնացած խմբերում բոլոր ապրանքատեսակները եղել են ամբողջովին պիտակավորված: Ընդ որում, Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանի կողմից չդրոշմավորված ապրանքների վաճառք չի իրականացվել:

Արձանագրությունում նշված ապրանքատեսակները տեսուչները հայտնաբերել են դասավորված ապրանքների խմբերի ներքին շարքերից՝ ընդամենը մեկ օրինակից: Վերոնշյալի վերաբերյալ Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանը տվել է համապատասխան գրավոր բացատրություն, սակայն դրանք անտեսվել են և իր նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանը խնդրում է վերանայել գործը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ՖՆ Գավառի ՏՀՏ 11.12.2015թ-ի թիվ 6109459 հանձնարարագրի Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանի մոտ կատարվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է «ՖՆ Գավառի ՏՀՏ 12.01.2016թ-ի թիվ 6109459 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանին պատկանող ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան 14 հասցեում գործող խանութում 18.12.2015թ-ին իրականացված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգումից պարզվել է, որ խախտվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք

ներմուծված՝ շշալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ նույն հողվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափաճրարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար: Նշված հասցեում իրականացվում էր հետևյալ չդրոշմապիտակավորված ապրանքների վաճառք՝ 1) մեկ հատ զեյթունի հեղուկ օճառ 250 մլ, որի վաճառքի գինը կազմում էր 900 դրամ, 2) «Օյա» օճառ մեկ հատ, որի վաճառքի գինը կազմում էր 130 դրամ, 3) շոգեխաշած միս տավարի մեկ հատ 325 գր. 620 դրամ արժողությամբ, 4) «Բարֆ» օճառ 750 գր. 470 դրամ արժողությամբ, 5) մեկ հատ մատիտ N02՝ 250 դրամ արժողությամբ: Նշված ապրանքները՝ ընդհանուր արժեքով 2370 դրամ, վերցվել են (հանվել են շրջանառությունից) հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Տվյալ դեպքում Ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի պահանջները, մասնավորապես՝ Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանին պատկանող ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան 14 հասցեում գործող խանութում իրականացվում էր չդրոշմապիտակավորված ապրանքների վաճառք:

Հանձնաժողովը գտնում է, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի դրույթները խախտված լինելու հանգամանքը ապացուցված համարվելու համար անհրաժեշտ էր արձանագրել դրոշմապիտակով պարտադիր դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքի օտարման որևէ դեպք: Մասնավորապես, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ սույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափաճրարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար»:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող անձանց կողմից ընկերության մանրածախ առևտրի կետում առկա ցուցադրման համար նախատեսված ցուցափեղկում հայտնաբերվել են թվով 12 հատ չդրոշմապիտակավորված ապրանքներ, սակայն ստուգմամբ ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր ընկերության կողմից դրոշմապիտակով պարտադիր դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանք օտարվելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ նման պայմաններում Ակտի 1-ին կետում բերված պնդումներն՝ Ա/Ձ Գալուստ Մարտիրոսյանի կողմից

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի պահանջները խախտված լինելու վերաբերյալ, ըստ էության, հիմնավոր չեն:

Հարկ է նշել նաև, որ օտարման ցանկացած փուլում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ապրանքների վրա դրոշմապիտակի առկայությունը պարտադիր լինելու պահանջը տնտեսվարող սուբյեկտի կողմից չկատարվելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով: Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածի համաձայն. «Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով»:


Վերոգրյալից հետևում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինի ակցիզային դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքների իրացման փաստ: Սակայն, իրականացված ստուգմամբ, ըստ էության, նման փաստ չի արձանագրվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ՝ 12.01.2016թ-ի թիվ 6109459 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ